«Թեքեյան Կենտրոն» հիմնադրամի կողմից իրականացված ծրագրեր 2022թ.



Դեկտեմբեր, 2022թ.

Օժանդակություն Հայաստանի Թեքեյան մշակութային միությանը՝ կազմակերպելու www.armtmm.com կայքի շնորհանդեսը:

Դեկտեմբեր, 2022թ.

Օժանդակություն Հայաստանի Թեքեյան մշակութային միությանը՝ կազմակերպելու Հայաստանի ժողովրդական նկարիչ Անատոլի Ավետյանի՝ «Իմ ժամանակի մեծերը» խորագրով դիմանկարների ցուցադրությունը Թեքեյան կենտրոնում:

Դեկտեմբեր, 2022թ.

Օժանդակություն «Հակոբ Պողոսյանի անվան կրթաթոշակ - 2022» շարադրությունների մրցույթի անցկացմանը:

Նոյեմբեր, 2022թ.

«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում սննդամթերքի եւ տնտեսական պարագաների /ընդամենը՝ 2,546 կգ/ տրամադրում Արցախից տեղահանված եւ Հրազդան համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին /III փուլ՝ 247 անձ = 60 ընտանիք/:

Նոյեմբեր, 2022թ.

Տեխնիկական օժանդակություն Արարատի մարզի Պարույր Սեւակ գյուղի միջնակարգ դպրոցին:

Հոկտեմբեր, 2022թ.

«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում սննդամթերքի եւ տնտեսական պարագաների /ընդամենը՝ 2,508 կգ/ տրամադրում Արցախից տեղահանված եւ Հրազդան համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին /II փուլ՝ 246 անձ = 57 ընտանիք/:

Հոկտեմբեր, 2022թ.

«Անվճար դասագրքեր 2022/2023» ծրագրի շրջանակում Երեւանի, Գյումրիի, Ստեփանավանի եւ Կարբի գյուղի՝ Վ.Թեքեյանի անվան դպրոցների 150 անապահով աշակերտներին 1,961 դասագրքի տրամադրում:

Հոկտեմբեր, 2022թ.

«Հայու հոգին. արեւմտահայ բանաստեղծները երգերում» խորագրով երաժշտական ձեռնարկ:

Սեպտեմբեր, 2022թ.

«Վահան Թեքեյան» ամենամյա միջազգային մրցանակաբաշխության 2021թ. «Գեղարվեստական լուսանկարչություն» անվանակարգի հովանավորում:

Սեպտեմբեր, 2022թ.

Օժանդակություն ՀԹՄՄ՝ կազմակերպելու «Առաջին համաշխարհային պատերազմի հայ սպաները Հայաստանի Հանրապետության բանակի սպաները 1914-1920 թթ.» գրքի շնորհանդեսը Թեքեյան կենտրոնում:

Սեպտեմբեր, 2022թ.

Օժանդակություն ՀԹՄՄ՝ կազմակերպելու Ռեժիսոր, Արցախյան առաջին պատերազմի մասնակից Կարեն Գևորգյանի՝ «Երկընտրանք» խորագրով փաստավավերագրական ֆիլմի պրեմիերան Թեքեյան կենտրոնում:

Օգոստոս, 2022թ.

Մաքրակարի արտադրական մեքենաների տրամադրում Արցախի սոցիալական զարգացման ծրագրերի հիմնադրամին՝ օժանդակելու երկու շահառու ընտանիքի կարի արտադրամաս հիմնելու համար:

Հունիս, 2022թ.

Օժանդակություն Լեյնադ Դանիելյանի «Մաղավուզ» գրքի շնորհանդեսի կազմակերպմանը Թեքեյան կենտրոնում:

Հունիս, 2022թ.

Հ.Թումանյանի թանգարանի հետ համագործակցությամբ՝ ԹԿՀ կազմակերպեց Զոհրաբ Ըռքոյանի հեղինակած «Հայկական Քաշաթաղ» ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում:

Հունիս, 2022թ.

«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում սննդամթերքի եւ տնտեսական պարագաների /ընդամենը՝ 2,508 կգ/ տրամադրում Արցախից տեղահանված եւ Հրազդան համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին (I փուլ՝ 234 անձ = 60 ընտանիք):

Մայիս, 2022թ.

Տեխնիկական օժանդակություն Քաշաթաղի շրջվարչակազմի «ՄԵՐԱՆ» պաշտոնաթերթին:



Մայիս, 2022թ.

ԹԿՀ «Արարատը հայի աչքերով» լուսանկարների հավաքածուն ցուցադրվել է Բեռլինի Կարլսհորստ թաղամասի մշակույթի տանը գերմանահայկական ամենամյա մշակութային օրերի շրջանակում:

Մայիս, 2022թ.

Վարդուհի Դավթյանի «Վահան Թէքէեան. Յօդուածների ժողովածու» Ա հատորի շնորհանդեսը Թեքեյան կենտրոնում:

Ապրիլ, 2022թ.

«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում սննդամթերքի եւ տնտեսական պարագաների /ընդամենը՝ 1,900 կգ/ տրամադրում Արցախից տեղահանված եւ Չարենցավան համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին (III փուլ՝ 182 անձ = 47 ընտանիք):

Ապրիլ, 2022թ.

Օժանդակություն Համլետ Մարտիրոսյանի «Ազգային ինքնության ակունքները» գրքի շնորհանդեսի կազմակերպմանը Թեքեյան կենտրոնում:

Ապրիլ, 2022թ.

PhotoPodium.com կայքի հետ համագործակցությամբ՝ ԹԿՀ հյուրընկալեց Վիկտոր Դանիլովի անհատական ցուցահանդեսը Թեքեյան կենտրոնում:

Ապրիլ, 2022թ.

Օժանդակություն «ԱԲԳ-ն եւ ընկերները» ապրիլմեկյան ցուցահանդեսի կազմակերպմանը Թեքեյան կենտրոնում:

Մարտ, 2022թ.

«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում լիցքավորված գազի բալոնների տրամադրում արցախցիներին, ինչպես նաեւ սննդամթերքի եւ տնտեսական պարագաների /ընդամենը՝ 2,310 կգ/ տրամադրում Արցախից տեղահանված եւ Չարենցավան համայնքում բնակություն հաստատած 54 ընտանիքի (II փուլ = 255 անձ):

Փետրվար, 2022թ.

«Օգնություն Արցախի մեր հայրենակիցներին» ծրագրի շրջանակում սննդամթերքի եւ տնտեսական պարագաների /ընդամենը՝ 2,774 կգ/ տրամադրում Արցախից տեղահանված եւ Չարենցավան համայնքում բնակություն հաստատած ընտանիքներին (I փուլ՝ 328 անձ = 60 ընտանիք):

Հունվար, 2022թ.

Ֆինանսական օժանդակություն Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամին: